	<p>հիմնավորում է,</p> <ol style="list-style-type: none"> 3) նյութական ռեսուրսների խմբերի տնտեսագիտական բնութագրերը ճիշտ է, 4) աշխատանքային ռեսուրսների բնութագիրը և դրանց առընչվող ցուցանիշների մեկնաբանությունը ճիշտ է, 5) աշխատանքի տեխնիկական նորմավորման էությունը ճիշտ է բացատրում, նորմաների մեծության ձևավորման մեխանիզմը ճիշտ է ներկայացնում, 6) ֆինանսական ռեսուրսների հետ կապված հասկացությունների բացատրությունը ճիշտ է, 7) ֆինանսական ռեսուրսների համալրման աղբյուրների առանձնահատկությունները ճիշտ է մեկնաբանում, 8) ռեսուրսների պահանջվելիք մեծության հաշվարկման մոտեցումները հիմնավոր է, 9) հիմնական կապիտալի առանձին խմբերի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է, 10) շրջանառու կապիտալի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է, 11) աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է, 12) ռեսուրսների օգտագործման վերաբերյալ պարզ վերլուծական գործողությունները և ըստ արդյունքների եզրահանգումները հիմնավոր է:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների և գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ ռեսուրսների տարբեր խմբերի հաշվել առավել ընդհանուր նշանակություն ունեցող ցուցանիշները: Նպատակահարմար է գործնական առաջադրանքները հանձնարարել փուլերով՝ ըստ ռեսուրսների խմբերի: Քննարկումների ընթացքում նրանք ոչ միայն գնահատելու են ստացված արդյունքները, այլ նաև առաջարկելու են լուծումների սեփական տարբերակները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Կազմակերպության ռեսուրսների ընդհանուր բնութագիրը: Նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսներ, դրանց կազմը: Հիմնական կապիտալ և շրջանառու կապիտալ: Ֆինանսական ռեսուրսներ: Ռեսուրսների մեծությունը</p>

	<p>բնութագրող ցուցանիշները: Ռեսուրսների օգտագործման մակարդակը բնութագրող ցուցանիշները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքները մեթոդապես ճիշտ են կատարվում:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, գործնական հանձնարարությունների փաթեթներ:
Ռիսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ռիսումնառության արդյունք 5	Կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորել ապրանքի /ծառայության/ գինը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) «ծախս» հասկացության բովանդակությունը ճիշտ է մեկնաբանում, 2) տարբերակում է ծախսերի խմբերը, 3) ծախսերը հիմնավորող փաստաթղթերի տեսակները և վավերապայմանները ճիշտ է ներկայացնում, 4) ծախսերի տարբեր խմբերի հաշվապահական ձևակերպումները ճիշտ է, 5) ապրանքների տարբեր տեսակների և ծառայությունների տարբեր խմբերի համար պահանջվող ծախսերի կազմը հիմնավոր է ներկայացնում, 6) ապրանքի կամ ծառայության ինքնարժեքի մեջ ներառվող ծախսերի հոդվածները ճիշտ է ներկայացնում, 7) ինքնարժեքի տարբեր հոդվածների մեծության հաշվարկման մեթոդաբանությունը ճիշտ է կիրառում, 8) հաշվում է ապրանքի կամ ծառայության միավորի ինքնարժեքը, 9) ինքնարժեքի իջեցման հնարավորությունները ճիշտ է գնահատում, 10) ինքնարժեք-շուկայական գին մարժայի տարբերության հիմնավորումը ճիշտ է, 11) անհատական գնից շուկայական գնի անցման տրամաբանությունը բացատրում է:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առաջադրանքի հիման վրա: Ռիսանողներին հանձնարարվելու է ըստ ծախսերի առանձին հոդվածների կատարել միավոր արտադրանքի կամ ծառայության համար դրանց հաշվարկներ և որոշել ինքնարժեքն ու գինը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերի հասկացությունը: Ռիզակի և</p>

	անուղղակի ծախսեր, կայուն և փոփոխական ծախսեր: Ծախսերի մեծության հաշվարկման մեթոդաբանությունը: Ծախսերի հաշվապահական ձևակերպման կարգը: Անալիտիկ և սինթետիկ հաշվառման կազմակերպումը: Միավորի ինքնարժեքի ծախսային հոդվածները: Ինքնարժեքի հաշվարկը: Շահույթի նորմայի հասկացությունը և կիրառումը: Արտադրանքի գնի մեծության հաշվարկը: Անհատական գնից շուկայական գնին անցման գործընթացը: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե հաշվարկները կատարվում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, գործնական հանձնարարությունների փաթեթներ, հաշվարկների կատարման ընթացքում օգտագործվող օրինակելի ձևաթղթեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Մշակել բիզնես պլան և գործողությունների ծրագիր
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բիզնես գործունեության համար բիզնես պլանի անհրաժեշտությունը հիմնավորում է, 2) բիզնես պլանի բաժինների բովանդակության մեկնաբանությունները ճիշտ է, 3) բիզնես պլանի մշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալների կազմը և ձեռք բերման աղբյուրները ճիշտ է ներկայացնում, 4) ճիշտ է կատարում SWOT վերլուծություն, 5) SWOT վերլուծության արդյունքները կիրառում է բիզնես պլանը մշակելու գործընթացում, 6) բիզնես պլանով նախատեսվող միջոցառումները հիմնավորված է, 7) բիզնես պլանի կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը, ժամանակացույցը հիմնավոր է, 8) բիզնես պլանի կատարումն ապահովող ռեսուրսների մեծությունները ճիշտ է սահմանվել, 9) բիզնես պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ռիսկերը և դրանց հաղթահարման քայլերը հիմնավոր են:
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է կազմված բիզնես պլանի հիման վրա, որում պետք է արտացոլված լինեն նախատեսված բիզնես գործունեության վերաբերյալ բոլոր հայտնի տեղեկությունները:

	<p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Բիզնես պլանի բովանդակությունը և բաժիններում ներառվող հարցերը: Բիզնես պլանի կազմման համար անհրաժեշտ ելակետային տվյալները, դրանց աղբյուրները: SWOT վերլուծության արդյունքների կիրառումը պլանը կազմելու ժամանակ: Բիզնես պլանի կատարման գործողությունների ծրագիրը, դրա կազմման մոտեցումները: Գործողությունների ժամանակացույցը: Պլանի կատարման հնարավոր ռիսկերը, դրանց հաղթահարման միջոցառումները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե պլանը կազմված է ճիշտ և հիմնավորված:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բիզնես պլանի բովանդակությանը համապատասխան ձևաթղթեր, մեթոդական հանձնարարականներ, պլանը կազմելու համար օգտագործվող ելակետային տվյալներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 7</p>	<p>Հաշվել հարկեր, տուրքեր, կազմել ֆինանսական հաշվետվություններ</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) հարկային օրենսդրության հիմնական դրույթները ճիշտ է մեկնաբանում, 2) հարկային օրենսդրության հիմնական հասկացությունները ճիշտ է բացատրում, 3) հարկերի և տուրքերի մեծությունը հաշվելու համար կիրառվող ելակետային ցուցանիշների հաշվարկը ճիշտ է կատարում, 4) հարկերի և տուրքերի մեծությունը ճիշտ է հաշվարկում, 5) հարկերի վճարման ժամկետների գնահատումը համապատասխանում է օրենսդրության պահանջներին, 6) ֆինանսական հաշվետվությունների կազմը ճիշտ է ներկայացնում, 7) անհրաժեշտ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ է լրացնում, 8) ստուգումների իրականացման իրավական ակտերի պահանջները ճիշտ է բացատրում, 9) ստուգումների հետ կապված տնտեսվարողի իրավունքներն ու պարտականությունները ճիշտ է ներկայացնում:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առջադրանքների կատարման հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է հաշվել հարկերի և տուրքերի գումարները, լրացնել ֆինանսական</p>

	<p>հաշվետվություններ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի և տուրքերի տեսակները, դրանց տնտեսական նշանակությունը: Հարկային օրենսդրության հիմնական դրույթները: Հարկերի հաշվարկման կարգը և դրույքաչափերը:</p> <p>Հարկատուների պատասխանատվությունը հարկային օրենսդրության պահանջների պահպանման համար:</p> <p>Ֆինանսական հաշվետվությունների տեսակները, հաշվետվությունների լրացման և ներկայացման կարգը:</p> <p>Ստուգումների անցկացումը, կարգը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները ճիշտ է կատարում:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, հարկերի վերաբերյալ օրենքներ և նորմատիվ փաստաթղթեր, մեթոդական նյութեր, հաշվետվությունների ձևաթղթեր, հաշվարկները կատարելու համար օգտագործվող ելակետային նյութերի փաթեթներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՏԱՆԴԱՐՏԱՑՈՒՄ, ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ, ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՀՍ-5-19-001
Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ և կարողություններ ստանդարտացման, սերտիֆիկացման և չափագիտության վերաբերյալ մասնագիտական գործունեության ոլորտում կիրառելու նպատակով:</p>
Մոդուլի տևողությունը	<p>54 ժամ, որից՝</p> <p>տեսական ուսուցում՝ 24 ժամ,</p> <p>գործնական աշխատանք՝ 30 ժամ</p>
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <p>1) ներկայացնի ՀՍ ոլորտում ՀՀ և միջազգային օրենսդրության ստանդարտները և կազմել դրանց համապատասխան անհրաժեշտ նորմատիվային փաստաթղթերը,</p>

	2) ներկայացնի չափումների տեսակները, միջոցները, ստուգաչափման մեթոդները և մեխանիզմները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ՀՍ ոլորտում ՀՀ և միջազգային օրենսդրության ստանդարտները և կազմել դրանց համապատասխան անհրաժեշտ նորմատիվային փաստաթղթերը
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է ՀՀ-ում գործող ստանդարտները, 2) ներկայացնում է միջազգային ստանդարտները, 3) կարողանում է կազմել օրենսդրության համապատասխան նորմատիվային փաստաթղթեր:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ՀՍ ոլորտում ՀՀ և միջազգային օրենսդրության ստանդարտների վերաբերյալ: Կհանձնարարվեն գործնական առաջադրանքներ օրենսդրության համապատասխան նորմատիվային փաստաթղթեր կազմելու վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝ <ul style="list-style-type: none"> • ՀՀ գործող ՀՍ ոլորտի ստանդարտները, • ՀՍ ոլորտի միջազգային ստանդարտները, • օրենսդրության համապատասխան նորմատիվային փաստաթղթեր: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 12 ժամ, գործնական աշխատանք՝ 14 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել չափումների տեսակները, միջոցները, ստուգաչափման մեթոդները և մեխանիզմները
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է մետրոլոգիայի համար պատասխանատու ինստիտուցիոնալ մարմինները,

	2) ներկայացնում է չափումների տեսակները, միջոցները, ստուգաչափման մեթոդները և մեխանիզմները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր չափումների տեսակների, միջոցների, ստուգաչափման մեթոդների և մեխանիզմների վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝ -մետրոլոգիայի պատասխանատու ինստիտուցիոնալ մարմինները, -չափումների տեսակները, միջոցները, ստուգաչափման մեթոդները և մեխանիզմները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 12 ժամ, գործնական աշխատանք՝ 16 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԹԵՐԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՀՍ-5-19-002
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել սննդամթերքի կազմաբանական կառուցվածքի և քիմիական նյութերի բաղադրության մասին գիտելիքներ և կարողություններ: Մոդուլն ավարտելուց հետո ուսանողը կկարողանա տեսակավորել հումքը և պահեստավորել սննդամթերքի մնացած բոլոր տեսակները:
Մոդուլի տևողությունը	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 30 ժամ, գործնական աշխատանք՝ 42 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի մսի կազմաբանական, քիմիական կառուցվածքը և սննդային արժեքը, մասնատումն՝ ըստ տեսակի,

	<p>կարողանա տեսակավորել և կազմակերպի միսը և կիսապատրաստուկները,</p> <p>2) որոշի մսի տեսակները, տարիքային առանձնահատկությունները և տեսակավորի ենթամասամթերքները,</p> <p>3) ներկայացնի ձկների դասակարգումը, որոշի ձկնամթերքի կազմը և սննդային նշանակությունը,</p> <p>4) որոշի ընտանի և վայրի թռչնամսի որակը, տեսակավորի և պահպանի սահմանված նորմերին համաձայն,</p> <p>5) ընտրի, տեսակավորի և պահեստավորել բանջարեղենը և սնկերը,</p> <p>6) ընտրի, տեսակավորել, պահեստավորի թարմ պտուղները (այդ թվում՝ մերձարևադարձային և արևադարձային) և հատապտուղները,</p> <p>7) ներկայացնի հացահատիկների, ձավարեղենի, այլուրի տեսակները և առանձնահատկությունները, դրանց պահպանման պայմանները:</p>
Մոդուլի գնահատման կարգը	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p>
Ուսումնառության արդյունք 1	<p>Ներկայացնել մսի կազմաբանական, քիմիական կառուցվածքը և սննդային արժեքը, մասնատումն՝ ըստ տեսակի, կարողանալ տեսակավորել և կազմակերպել միսը և կիսապատրաստուկները</p>
Կատարման չափանիշներ	<p>1) բնութագրում է մսի սննդային արժեքի կարևորությունը,</p> <p>2) բնութագրում է մսի հյուսվածքային կառուցվածքը,</p> <p>3) կարողանում է տեսակավորել միսը և մասնատել՝ ըստ խորահարարական մշակման,</p> <p>4) կարողանում է կազմակերպել կիսապատրաստուկների փաթեթավորումը ըստ քաշերի,</p> <p>5) ճիշտ է ընտրում սառնարանային ռեժիմը կիսապատրաստուկների պահպանման համար:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր մսի սննդային արժեքների կարևորության. մսի հյուսվածքային կազմի վերաբերյալ: Կհանձնարարվեն գործնական աշխատանքներ մսի տեսակավորման, մասնատման, կիսապատրաստուկների պատրաստման, փաթեթավորման և պահպանման վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <p>- մսի սննդային արժեքը,</p>

	<p>- մսի հյուսվածքային կառուցվածքը, -մսի տեսակավորումը և մասնատումը, - կիսապատրաստուկների փաթեթավորումը, - սառնարանային ռեժիմների ընտրումը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ: Գործնական պարապմունքների համար անհրաժեշտ ռեսուրսներն են խոհանոցային գույք և պարագաներ, անհրաժեշտ սննդամթերք և փաթեթավորող նյութեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Որոշել մսի տեսակները, տարիքային առանձնահատկությունները և տեսակավորել ենթամասամթերքները</p>
Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է տարբերակել մսի տեսակները՝ ըստ տարիքի և սեռի 2) ճիշտ է տեսակավորում ենթամասամթերքներն՝ ըստ կատեգորիաների:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր մսի տեսակների, տարիքային առանձնահատկությունների, ենթամասամթերքների տեսակավորման և կատեգորիաների վերաբերյալ: Կհանձնարարվեն գործնական աշխատանքներ մսի և ենթամասամթերքների տեսակավորման վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> -մսի տեսակները, տարիքային առանձնահատկությունները, -ենթամասամթերքների տեսակները և կատեգորիաները: <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ</p>

	մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ձկների դասակարգումը, որոշել ձկնամթերքի կազմը և սննդային նշանակությունը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տարբերակում է թարմ, պաղեցրած, սառեցրած և աղ դրած ձկները, 2) ներկայացնում է սառեցրած, պաղեցրած ձկների ապրանքային տեսքը և թարմությունը, 3) որոշում է աղ դրած ձկան աղի պարունակությունը, 4) որոշում է աղ դրած և սառեցրաց ձկան հետ կատարվող փոփոխությունները, 5) բնութագրում է ձկան քիմիական կազմը՝ ըստ տեսակի:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողի կտրվեն հարցեր թարմ, պաղեցրած, սառեցրած և աղ դրած ձկների և նրանց քիմիական կազմի վերաբերյալ: Կհանձնարարվեն գործնական աշխատանքներ աղ դրած ձկան աղի պարունակության և աղ դրած և սառեցրած ձկան հետ կատարվող փոփոխությունների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - թարմ, պաղեցրած, սառեցրած և աղ դրած ձկների առանձնահատկությունները, - սառեցրած, պաղեցրած ձկների ապրանքային տեսքը և թարմությունը, - աղ դրած ձկան աղի պարունակությունը, - աղ դրած և սառեցրաց ձկան հետ կատարվող փոփոխությունները, - ձկան քիմիական կազմը՝ ըստ տեսակի: <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, գործնական առաջադրանքների համար անհրաժեշտ ռեսուրսներն են համապատասխան սննդամթերք, խոհանոցային պարագաներ:

Ուսուցման ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Որոշել ընտանի և վայրի թռչնամսի որակը, տեսակավորել և պահպանել սահմանված նորմերին համաձայն
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) որոշում է թարմ, հովացրած, պաղեցրած և սառեցրած թռչնամսի որակը, 2) կարողանում է տեսակավորել թարմ, հովացրած, պաղեցրած և սառեցրած թռչնամիսը, 3) ճիշտ է ընտրում փաթեթավորման համար նախատեսված փաթեթները, 4) տարբերակում է կիսապատրաստվածքները և ճիշտ է ներկայացնում պահպանման ռեժիմը, 5) ճիշտ է մասնատում ամբողջական հավը բաժնային կտորների և փաթեթավորում՝ պահպանելով ջերմային ռեժիմը, 6) ճիշտ է ընտրում թարմ, հովացրած, պաղեցրած և սառեցրած թռչնամսի սառնարանային ռեժիմը և պահպանման ժամկետը, 7) տեսակավորում է վայրի թռչնամիսը և ընտրում պահպանման ջերմաստիճանը, տևողությունը, 8) որոշում է վայրի թռչնամսի որակը և բնութագրում նրա սննդային արժեքը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր թռչնամսի որակի, տեսակավորման և փաթեթավորման, պահպանման վերաբերյալ: Կհանձնարարվեն գործնական աշխատանքներ ընտանի և վայրի թռչնամսի մասնատման, փաթեթավորման և պահպանման ռեժիմների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - թարմ, հովացրած, պաղեցրած և սառեցրած թռչնամսի որակը, - թարմ, հովացրած, պաղեցրած և սառեցրած թռչնամսի տեսակավորումը, - փաթեթավորման համար նախատեսված փաթեթները, - կիսապատրաստվածքների պահպանման ռեժիմները, - ամբողջական հավի մասնատումը և փաթեթավորումը, ջերմային ռեժիմների պահպանումը, - թարմ, հովացրած, պաղեցրած և սառեցրած թռչնամսի սառնարանային ռեժիմը և պահպանման ժամկետը, - վայրի թռչնամսի ընտրում, տեսակավորում և պահպանման ջերմաստիճանի ընտրում,

	<p>- վայրի թռչնամսի որակը և սննդային արժեքը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, գործնական առաջադրանքների համար անհրաժեշտ ռեսուրսներն են՝ համապատասխան սննդամթերք, խոհանոցային պարագաներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Ընտրել, տեսակավորել և պահեստավորել բանջարեղենը և սնկերը</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) թվարկում և բնութագրում է վեգետատիվ բանջարեղենների խումբը, 2) թվարկում և բնութագրում է պտղաբանջարեղենների ենթախմբերը, 3) ըստ հասունացման ժամկետների ճիշտ է բնութագրում ուշահաս, վաղահաս, միջահաս բանջարեղենները, 4) բնութագրում է ընդեղեն (բակլա) բանջարեղենները և դրանց քիմիական կազմը, 5) կարողանում է տարբերակել ուտելու և թունավոր սնկերը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր թարմ վեգետատիվ և պտղաբանջարեղենների խմբերի տեսակների, ընդեղենի և նրանց քիմիական կազմի վերաբերյալ: Գործնական առաջադրանքով կհանձնարարվի ընտրել և պահեստավորել բանջարեղեն և սնկեր:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> -վեգետատիվ բանջարեղենի բնութագրումը, -պտղաբանջարեղենի բնութագրումը և ենթախմբերը, -ուշահաս, վաղահաս, միջահաս բանջարեղենի հասունացման ժամկետները, - ընդեղեն բնջարեղենը և նրանց քիմիական կազմը, -սնկերի տեսակները և բնութագրումը:

	Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, գործնական առաջադրանքների համար անհրաժեշտ ռեսուրսներն են համապատասխան սննդամթերք, խոհանոցային պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Ընտրել, տեսակավորել, պահեստավորել թարմ պտուղները (այդ թվում՝ մերձարևադարձային և արևադարձային) և հատապտուղները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բնութագրում ընդավոր պտուղները, կախված սեզոնայնությունից՝ նկարագրում է դրանց կառուցվածքը և կիրառումը, 2) ճիշտ է ընտրում տեղափոխման և պահպանման եղանակները, վերլուծում՝ կախված սեզոնայնությունից և պահպանումից պտուղների հետ կատարվող բնափոխությունները, 3) ճիշտ է թվարկում կորիզավոր պտուղները, տալիս դրանց բնութագիրը և քիմիական բաղադրությունը, 4) ճիշտ է բնութագրում հատապտուղների և վայրի հատապտուղների պահպանման ռեժիմը, քիմիական բաղադրությունը, 5) ճիշտ է թվարկում մերձարևադարձային և արևադարձային պտուղները և տալիս դրանց բնութագրումը, 6) ըստ ընտանիքների ճիշտ է թվարկում բանջարեղենների անվանումները, 7) ճիշտ է բնութագրում արմատապտուղների և պալարապտուղների խումբը և դրանց ֆիզիկաքիմիական կազմը, 8) ճիշտ է բնութագրում սոխաբանջարեղենների և կաղամբաբանջարեղենների խումբը և դրանց ֆիզիկաքիմիական կազմը, 9) ճիշտ է բնութագրում տերևաբանջարեղենների և աղանդերային բանջարեղենների և դրանց ֆիզիկաքիմիական կազմը, 10) ճիշտ է թվարկում համային բանջարեղենների խումբը և դրանց օգտագործման ձևերը,

	<p>11) ճիշտ է բնութագրում դրմաբանջարեղենները և տոմատային բանջարեղենները,</p> <p>12) ճիշտ է որոշում բանջարեղենների համային արժեքը և քիմիական կազմը,</p> <p>13) ճիշտ է բնորոշում պահուսակությունը,</p> <p>14) ճիշտ է դասավորում պահոցում բանջարեղենը և պահպանում ջերմաստիճանը, ընտրում պահպանման ժամանակը,</p> <p>15) ճիշտ է պահպանում ընդավոր պտուղների գործոնները,</p> <p>16) ճիշտ է բնութագրում հատապտուղների հետ տարվող խնամքը և որոշում պահպանման ժամկետները:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր թարմ պտուղների (այդ թվում՝ մերձարևադարձային և արևադարձային) և հատապտուղների տեսակների, քիմիական կազմի, տեղափոխման և պահպանման ռեժիմների վերաբերյալ: Կհանձնարարվեն գորնական աշխատանքներ ընդավոր և կորիզավոր պտուղների, հատապտուղների, տերևաբանջարեղենի, սոխային և դդմային բանջարեղենի, սնկերի տեսակավորման և պահպանման վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - ընդավոր պտուղների կառուցվածքը և կիրառումը, - պտուղների տեղափոխման և պահպանման եղանակները, պտուղների հետ կատարվող փոփոխությունները պահպանման ժամանակ, - կորիզավոր պտուղների բնութագրումը և նրանց քիմիական բաղադրությունը, - հատապտուղների և վայրի հատապտուղների պահպանման ռեժիմները և քիմիական բաղադրությունը, - մերձարևադարձային և արևադարձային պտուղների բնութագրումը, - արմատապտուղների և պալարապտուղների բնութագրումը և քիմիական կազմը, - սոխաբանջարեղենի, կաղամբաբանջարեղենի, տերևաբանջարեղենի և աղանդերային բանջարեղենի բնութագրումը և քիմիական կազմը, - համային բանջարեղենի բնութագրումը, - դդմային և տոմատային բանջարեղենի բնութագրումը,

	<p>- բանջարեղենի քիմիական կազմը և համային արժեքը,</p> <p>- բանջարեղենի պահպանման ժամկետները և պայմանները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, գործնական առաջադրանքների համար անհրաժեշտ ռեսուրսներն են համապատասխան սննդամթերք, խոհանոցային պարագաներ
Ռիսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ռիսումնառության արդյունք 7	Ներկայացնել հացահատիկների, ձավարեղենի, այլուրի տեսակները և առանձնահատկությունները, դրանց պահպանման պայմանները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բնութագրում հացահատիկի որակը, քիմիական կազմը, պահման ժամկետները և վարակվածությունը, 2) տարբերակում է փափուկ և կարծր ցորենը և որոշում օգտագործման եղանակները, 3) ըստ տեսակի և տիպի ճիշտ է տարբերակում այլուրի տեսակները և նկարագրում այլուրի ստացման տեխնոլոգիան, 4) ճիշտ է բնութագրում աշորայի այլուրի տեսակները և օգտագործում հացաթխման համար, 5) զգայորոշման եղանակով ճիշտ է գնահատում այլուրի որակը, 6) ճիշտ է գնահատում ձավարի տեսակները և որակը՝ զգայորոշման և ֆիզիկաքիմիական ցուցանիշներով, 7) ճիշտ է բնութագրում պահպանման ժամանակ ընթացող կենսաքիմիական, ֆիզիկական, քիմիական և մանրէաբանական գործընթացները, 8) բնութագրում է շրջակա միջավայրի ազդեցությունը հատիկի ծլելու և փչանալու վրա, 9) կախված եղանակներից ճիշտ է նկարագրում պահման ջերմաստիճանը և տևողությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր հացահատիկների, ձավարեղենի, այլուրի տեսակների և

	<p>առանձնահատկությունների, դրանց պահպանման պայմանների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> -հացահատիկի որակը, քիմիական կազմը, պահման ժամկետները և վարակվածությունը, -ցորենի տեսակները և օգտագործման եղանակները, -այլուրի տեսակները և ստացման տեխնոլոգիան, -այլուրի որակի գնահատումը, -այլուրի պահպանման ժամանակ ընթացող կենսաքիմիական, ֆիզիկական, քիմիական և մանրէաբանական գործընթացները, -այլուրի պահպանման պայմանները: <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, գործնական առաջադրանքների համար անհրաժեշտ ռեսուրսներն են համապատասխան սենդամթերք, խոհանոցային պարագաներ:</p>
Ուսուցման ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆՐԷԱԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՀՍ-5-19-003
Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է ուսանողին տալ անհրաժեշտ գիտելիքներ մանրէների տարբեր տեսակների (բակտերիաներ, մանրադիտակային սնկեր, վիրուսներ) կազմաբանության, ֆիզիոլոգիայի, նշանակության, հայտնաբերման մեթոդների վերաբերյալ:</p> <p>Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կկարողանա վերլուծել հումքերի, կիսապատրաստվածքների և պատրաստի արտադրանքի մանրէակենսաբանական հետազոտության արդյունքերը և որոշել դրանց ախտահարվածության աստիճանը:</p>

Մոդուլի տևողությունը	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 30 ժամ, գործնական աշխատանք՝ 42 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնի մանրէների տարբեր տեսակների ձևաբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, դրանց դասակարգումը, կարգաբանական խմբերը, 2) ներկայացնի միկրոօրգանիզմների կենսագործունեության վրա ազդող ֆիզիկական, քիմիական, կենսաբանական գործոնները, լույսի և ճառագայթային էներգիաների ազդեցությունը, ինպես նաև սննդամթերքի արտադրման և պահման ժամանակ միկրոօրգանիզմների կենսագործունեության կարգավորումը այդ գործոնների կիրառմամբ, 3) ներկայացնի միկրոօրգանիզմների օգտագործումը արդյունաբերական նպատակներով, 4) ներկայացնի սննդային արդյունաբերության մեջ ախտածին մանրէների կանխարգելումը, 5) ներկայացնի սննդամթերքի տարալավորման և պահպանության գործընթացներում մանրէազերծ միջավայրի ապահովումը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մանրէների տարբեր տեսակների ձևաբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, դրանց դասակարգումը, կարգաբանական խմբերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մանրէների տարբեր տեսակների ձևաբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, դրանց դասակարգումը, կարգաբանական խմբերը, 2) ճիշտ է նկարում կամ ցույց տալիս մանրէների ձևերը (արտաքին տեսքը):
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր մանրէների տարբեր տեսակների ձևաբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունների դրանց դասակարգման վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝

	<ul style="list-style-type: none"> - մանրէներ՝ բակտերիաներ, սնկեր, խմորասնկեր, վիրուսներ, - դրանց կառուցվածքը, ձևերը, բազմացումը, դասակարգումը, - բակտերիաների և խմորասնկերի բջջի կառուցվածքի տարբերությունը, - մանրէների նյութափոխանակությունը, - մանրէների չափման միավորները, - մանրադիտակների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, - մանրէների տարածվածությունը շրջակա միջավայրում: <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Ներկայացնել միկրոօրգանիզմների կենսագործունեության վրա ազդող ֆիզիկական, քիմիական, կենսաբանական գործոնները, լույսի և ճառագայթային էներգիաների ազդեցությունը, ինչպես նաև սննդամթերքի արտադրման և պահման ժամանակ միկրոօրգանիզմների կենսագործունեության կարգավորումը այդ գործոնների կիրառմամբ</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բնորոշում ջերմաստիճանի ազդեցությունը միկրոօրգանիզմների կենսագործունեության վրա և ճիշտ է ներկայացնում մանրէների խմբերը՝ կախված ջերմադիմացկունությունից, 2) ճիշտ է ներկայացնում ճնշման և խոնավության ազդեցությունը միկրոօրգանիզմների կենսագործունեության վրա, 3) ճիշտ է ներկայացնում քիմիական և կենսաբանական գործոնների ազդեցությունը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր մանրէների խմբերի, միկրոօրգանիզմների կենսագործունեության վրա ջերմաստիճանի ճնշման և խոնավության ազդեցության ինչպես նաև քիմիական և կենսաբանական գործոնների ազդեցության վերբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p>

	<ul style="list-style-type: none"> - մանրէների կեսագործունեության վրա ազդող ֆիզիկական (խոնավություն, ջերմաստիճան, ճառագայթում, օսմոտիկ ճնշում, լույսի գործոնները, դրանց առանձնահատկությունները, - մանրէների կեսագործունեության վրա ազդող քիմիական (դեզինֆեկտանտներ, ասեպտիկներ) գործոնները, դրանց առանձնահատկությունները, - մանրէների կեսագործունեության վրա ազդող կենսաբանական (հակաբիոտիկներ) գործոնները, դրանց առանձնահատկությունները, - անտագոնիզմի և սիմբիոզի դերը տարբեր մանրէների կենսագործունեության վրա: <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել միկրոօրգանիզմների օգտագործումը արդյունաբերական նպատակներով
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում մաքուր կուլտուրաների կիրառման առավելությունները, դրանց առանձնացման և աճի սխեմաները, 2) ճիշտ է նկարագրում սպիրտային, կաթնաթթվային խմորումները, դրանց իրականացման օպտիմալ պայմանները, 3) ճիշտ է ներկայացնում խմորասնկերի կենսագործունեության հետևանքով սպիտակուցների, ճարպերի և վիտամինների սինթեզման մեխանիզմները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր մաքուր կուլտուրաների կիրառման սպիրտային, կաթնաթթվային խմորումների իրականացման պայմանների, սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի և վիտամինների սինթեզման մեխանիզմների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p>

	<ul style="list-style-type: none"> - մաքուր կուլտուրաների կիրառման առավելությունները, դրանց առանձնացման և աճի սխեմաները, - սպիրտային, կաթնաթթվային խմորումները, դրանց իրականացման օպտիմալ պայմանները, - խմորասնկերի կենսագործունեության հետևանքով սպիտակուցների, ճարպերի և վիտամինների սինթեզման մեխանիզմները: <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Ներկայացնել սննդային արդյունաբերության մեջ ախտաճին մանրէների կանխարգելումը</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում սննդային թունավորումների տեսակները, դրանց հարուցիչները, 2) ճիշտ է ներկայացնում կենսագործունեության օպտիմալ պայմանները և կանխարգելիչ գործողությունները, 3) ճիշտ է ներկայացնում արտադրության սանիտարական կանոնների, ինչպես նաև անձնական հիգիենայի կանոնների խախտման հետևանքով առաջացող սննդային թունավորումները և աղետամոքսային խանգարումները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր սննդային թունավորումների տեսակների, դրանց հարուցիչների, կանխարգելիչ գործողությունների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - սննդային թունավորումների տեսակները, դրանց հարուցիչները, - կենսագործունեության օպտիմալ պայմանները և կանխարգելիչ գործողությունները, - արտադրության սանիտարական կանոնների, ինչպես նաև անձնական հիգիենայի կանոնների խախտման հետևանքով առաջացող սննդային թունավորումները և աղետամոքսային խանգարումները: <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր:
Ռիսուցման Ժամաքանակը Երաշխավորված	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ռիսումնառության արդյունք 5	Ներկայացնել սննդամթերքի տարայավորման և պահպանության գործընթացներում մանրէազերծ միջավայրի ապահովումը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում սննդամթերքի մանրէները, դրանց զարգացման օպտիմալ պայմանները և գործոնները, 2) ճիշտ է ներկայացնում մանրէները կենսագործունեության հետևանքով մթերքի փչանալը, 3) ճիշտ է ներկայացնում վնասակար մանրէների թափանցման ուղիները սննդամթերքի արտադրություն:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր սննդամթերքի մանրէներ, դրանց զարգացման օպտիմալ պայմանների և գործոնների, մանրէների կենսագործունեության հետևանքով մթերքի փչանալու և սննդամթերքի արտադրությունում վնասակար մանրէների թափանցման ուղիների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - սննդամթերքի մանրէները, դրանց զարգացման օպտիմալ պայմանները և գործոնները, - մանրէների կենսագործունեության հետևանքով մթերքի փչանալը, - վնասակար մանրէների թափանցման ուղիները սննդամթերքի արտադրություն: <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր:
Ռիսուցման Ժամաքանակը Երաշխավորված	տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 10 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՆԱԼԻՏԻԿ, ՖԻԶԿՈԼՈԻԴ ՔԻՄԻԱ»	

Մոդուլի դասիչը	ՀUS-5-19-004
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ անհրաժեշտ գիտելիքներ օրգանական, անալիտիկ և ֆիզկոլոիդ քիմիաների հիմնական դրույթների և հասկացությունների, ինչպես նաև քիմիական նյութերի կարևոր դասերի մասին: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կկարողանա հասկանալ բնության երևույթները, քիմիական գործընթացները և քիմիական փորձաքննության մեթոդները, քիմիայի հիմնական ընթացքները (պրոցեսները) և կկարողանա պրակտիկ կիրառել օրգանական, անալիտիկ և ֆիզկոլոիդ քիմիաների մեթոդները:
Մոդուլի տևողությունը	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում 32 ժամ, գործնական աշխատանք 40 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի օրգանական քիմիայի հիմնական հասկացությունները սննդարդյունաբերությունում, 2) ներկայացնի անալիտիկ քիմիայի հիմնական հասկացությունները սննդարդյունաբերությունում, 3) ներկայացնի ֆիզկոլոիդային քիմիայի հիմնական հասկացությունները սննդարդյունաբերությունում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել օրգանական քիմիայի հիմնական հասկացությունները սննդարդյունաբերությունում
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է օրգանական նյութերը, 2) կարողանում է կարդալ և կազմել օրգանական ռեակցիաներ 3) բնութագրում է սպիտակուցների, ածխաջրերի, ճարպերի քիմիական կազմը և հատկությունները
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր օրգանական նյութերի, սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի քիմիական կզմի և հատկությունների վերաբերյալ: Կտրվեն առաջադրանքներ օրգանական ռեակցիաներ կարդալու և կազմելու վերաբերյալ:

	<p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - օրգանական նյութերի տեսակները, - օրգանական ռեակցիաները, - սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի քիմիական կազմը և հատկությունները: <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում 12 ժամ, գործնական աշխատանք 14 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Ներկայացնել անալիտիկ քիմիայի հիմնական հասկացությունները սննդարդյունաբերությունում</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է անալիտիկ քիմիայի դերը գիտության և արդյունաբերության մեջ, 2) ներկայացնում է իոնական, կովալենտ և ջրածնային կապերը, 3) բնութագրում է որակական և քանակական անալիզները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր սննդարդյունաբերությունում անալիտիկ քիմիայի նշանակության վերաբերյալ: Կտրվեն առաջադրանքներ իոնական, կովալենտ և ջրածնային կապերի, ինչպես նաև որակական և քանակական անալիզների կատարման վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - անալիտիկ քիմիայի դերը գիտության և արդյունաբերության մեջ, - իոնական, կովալենտ և ջրածնային կապերը, - որակական և քանակական անալիզները: <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր:
Ռեսուրսների քանակը	տեսական ուսուցում 12 ժամ, գործնական աշխատանք 14 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ֆիզիկոլոգիային քիմիայի հիմնական հասկացությունները սննդարդյունաբերությունում
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է ֆիզիկական և կոլոիդային քիմիայի հիմնական հասկացությունները, 2) ներկայացնում է թերմոդինամիկայի օրենքները:
